Դիմում-հայտի ուսումնասիրության և Հաճախորդի վարկունակության գնահատման փուլում Դիմում-հայտը կարող է մերժվել, եթե՝

- ներկայացված փաստաթղթերն ամբողջական չեն, և Հաճախորդը ողջամիտ ժամկետում չի համալրում անհրաժեշտ [redacted]
- ներկայացված կեղծ են կամ փաստաթղթերում ներկայացված տվյալները չեն համապատասխանում իրականությանը
- առկա է Հաճախորդի/նրա հետ Փոխկապակցված անձանց (նաև (Երաշխավոր(ներ)ի) բացասական վարկային պատմություն (համաձայն Կամուրջի ներքին իրավական ակտերի),
- Հաճախորդի (նրա հետ Փոխկապակցված անձանց)՝ նախորդ տասներկու ամիսների ընթացքում ժամկետանց օրերի հանրագումարը Վարկային բյուրոյի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն գերազանցում է 45 օրացույցային օրը,
- Հաճախորդը (նրա հետ Փոխկապակցված անձինք) Դիմում հայտի ներկայացման պահին կամ ներկայացմանը նախորդող 30 օրվա ընթացքում ունեցել են ժամկետանց պարտավորություններ, կամ վարկային ռիսկի դասը դասակարգված է ստանդարտից ավելի խիստ դասով
- ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հակասում է փաստացի բնակության/գործունեության վայր կատարած այցելության ընթացքում բացահայտված հանգամանքներին (փաստերին),
- Պատասխանատու բաժնի ղեկավարի կամ Պատասխանատու բաժնի Վարկային մասնագետի հիմնավոր կարծիքով վարկի տրամադրումը Կամուրջի համար պարունակում է ռիսկեր,
- առկա են կամ վարկի տրամադրումից հետո կարող են առաջանալ այնպիսի ռիսկեր, որոնք հետագայում կարող են մեծապես նվազեցնել Վարկառուի վարկունակության մակարդակը,
- Հաճախորդը/նրա հետ Փոխկապակցված անձինք/Երաշխավորը Կարգի շրջանակներում վարկ ստանալու խնդրանքով նախորդ երեք ամիսների ընթացքում դիմել են Կամուրջին և ստացել մերժում,
- Հաճախորդի վարկունակության գնահատումը տվել է բացասական արդյունք (այս դեպքում Դիմում-հայտը պարտադիր մերժվում է),
- այլ հիմնավոր պաճառներով:

Դրական որոշման գործոնները վերոնշյալ կետերի բացակայությունն է և գրավի առարկայի ընդունելի լինելը: